ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ՆԿԱՐԱԳԻՐ

Գործընկերություն հանուն լավ կառավարման

http://partnership-governance2-eu.coe.int

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ) ծրագիրը Արագ արձագանքման մեխանիզմի հյուրընկալ ծրագիրն է: Այն համագործակցային ծրագիր է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի միջև՝ Արևելյան գործընկերության երկրների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա և Բելառուս) համագործակցության համար: Ծրագրի նպատակն է ամրապնդել տարածաշրջանի կայունացումը և ճկունությունը, մասնավորապես, հասնել Արևելյան գործընկերության 2020 թվականի նպատակներին և աջակցել Եվրոպայի խորհրդի նկատմամբ երկրների ստանձնած հանձնառությունների հետագա կատարմանը: Դրան հնարավոր է հասնել, մասնավորապես, նշված երկրներում եվրոպական չափանիշներին ներպետական օրենսդրության և պրակտիկայի համապատասխանության բարելավման միջոցով: Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագիրը ներառում է տարբեր ոլորտներ՝ կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար, դատական բարեփոխումներ, պայքար խտրականության դեմ և խոցելի խմբերի ու փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն:

Աջակցություն տրամադրելիս ԳԼԿ-ն հետամուտ է երկշերտ մոտեցման՝

- Եվրոպական չափանիշներին համապատասխանության բարելավմանն ուղղված տեխնիկական աջակցության տրամադրում:
- Իրավաբանական խորհրդատվություն՝ կապված գերակա բարեփոխումների հետ՝ Եվրոպայի խորհրդի Արագ արձագանքման մեխանիզմի (ԱԱՄ) միջոցով:

ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ (ԱԱՄ)

ԱԱՄ-ը Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրի գործիք է, որի միջոցով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (ավելի շատ հայտնի՝ որպես Վենետիկի հանձնաժողով) կարող է ad-hoc (հատուկ) իրավաբանական խորհրդատվություն տրամադրել խնդրո առարկա երկրներից կամ Եվրոպական միությունից ներկայացված օրենսդրական վերլուծությունների և համապատասխան աջակցության դիմումներին արձագանքելու համար:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)

Եվրոպայի խորհրդի՝ սահմանադրական հարցերով խորհրդատվական մարմին է, որի դերն է *իրավաբանական խորհրդատվություն տրամադրել* ԵԽ անդամ պետություններին և, մասնավորապես, օգնել այն պետություններին, որոնք ցանկանում են իրենց իրավական և ինստիտուցիոնալ կառույցները համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին և միջազգային փորձին՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ոլորտներում:

www.venice.coe.int

Ո՞ՐՆ Է ԱԱՄ-Ի ՇՐՋԱՆԱԿԸ

Աշխարհագրորեն ԱԱՄ-ը ներառում է Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը, Ուկրաինան և Բելառուսը: Դրա աշխատանքային շրջանակը ներառում է Վենետիկի հանձնաժողովի իրավասության ոլորտին դասվող բոլոր հարցերը, մասնավորապես՝

- ժողովրդավարական ինստիտուտներ և հիմնարար իրավունքներ,
- ընտրություններ, հանրաքվեներ և քաղաքական կուսակցություններ,
- սահմանադրական և սովորական արդարադատություն:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Պետությունների ղեկավարները, խորհրդարանների խոսնակները, նախարարները և կառավարության այլ անդամները համապատասխան երկրներից կարող են դիմել հանձնաժողովին փորձագիտական կարծիք ստանալու համար: Եվրոպական միությունը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի մարմինները (այսինքն՝ Գլխավոր քարտուղարը, Նախարարների կոմիտեն, Խորհրդարանական վեհաժողովը և Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը) նույնպես կարող են փորձագիտական կարծիք հայցել: Վենետիկի հանձնաժողովից amicus curiae (դատարանի ընկեր) կարծիքների ստացման դիմում կարող են նաև ներկայացնել Սահմանադրական դատարանները:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ի լրումս իշխանության իրավասու մարմնի կողմից ներկայացվելու պահանջին, ԱԱՄ-ին ուղղված դիմումները պետք է համապատասխանեն ստորև նշված բոլոր չափանիշներին՝

- դասվեն Վենետիկի հանձնաժողովի փորձագիտական ոլորտի շրջանակին, ներառյալ՝ ժողովրդավարական ինստիտուտներ և հիմնարար իրավունքներ, ընտրություններ, հանրաքվեներ և քաղաքական կուսակցություններ և սահմանադրական ու սովորական արդարադատություն,
- համապատասխանեն տվյալ երկրում բացահայտված կոնկրետ կարիքի,
- վերաբերեն ռազմավարական նշանակության քաղաքականության առանցքային ասպեկտի,
- չփոխհատվեն Եվրոպայի խորհրդի կամ Եվրոպական միության կողմից արդեն իսկ տրամադրված որևէ այլ աջակցության հետ:

ԻՆՉՊԵ՞Ս ՁԵՎԱԿԵՐՊԵԼ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԸՆԹԱՑՔ ՏԱԼ ԴՐԱՆ

Դիմումները պետք է լինեն գրավոր և հասցեագրվեն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին կամ Վենետիկի հանձնաժողովի նախագահին: Դիմումները պետք է ներառեն հնարավորինս շատ մանրամասներ, այդ թվում՝ այն օրենսդրության անվանումը և տեսակը, որի վերաբերյալ փորձագիտական կարծիք է ակնկալվում, փորձաքննության անհրաժեշտության կամ օրենսդրության փոփոխության պատճառները և փորձագիտական կարծիքի տրամադրումից հետո նոր օրենսդրության ընդունման (կամ գոյություն ունեցող օրենսդրության փոփոխման) համար նախատեսված ժամանակը:

Դիմումների ստացումից հետո դրանց ընթացք կտրվի, և իշխանություններին կտեղեկացվի ժամանակացույցի մասին: Փորձագիտական կարծիքը կտրամադրվի հնարավոր սեղմ ժամկետներում:

Ո՞ԻՄ ՀԱՍՑԵԱԳՐԵԼ ԴԻՄՈՒՄԸ

Տկն. Մարիա ՊԵՅՉԻՆՈՎԻՉ ԲՈՒՐԻՉ
Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Strasbourg Cedex
Ֆրանսիա
Հեռ.՝ + 33 3 88 41 20 00
Ֆաքս՝ + 33 3 88 41 27 99

Պրն. Ջաննի ԲՈՒՔԻՔԻՈ
Վենետիկի հանձնաժողովի նախագահ
Եվրոպայի խորհուրդ
67075 Strasbourg Cedex
Ֆրանսիա
Էլ-փոստ՝ venice@coe.int
Ֆաքս՝ +33 3 88 41 37 38

ՀԱՐՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ՝

Ծրագրերի գլխավոր տնօրինության գրասենյակ
Գործընկերություն հանուն լավ կառավարման
Strasbourg Cedex 67075 ՖՐԱՆՍԻԱ
Էլ-փոստ՝ odgp_pgg@coe.int
Ֆաքս՝ +33 3 90 21 46 31

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

@partnershipgovernance

@CoeEapPCF

odgp_pgg@coe.int
http://partnership-governance2-eu.coe.int

PREMS 182819– Photos : Council of Europe and Shutterstock

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

Եվրոպական միության անդամ պետությունները որոշել են միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Միասին նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները: Եվրոպական միությունը պարտավորվում է կիսել իր նվաճումները և արժեքները իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

www.europa.eu

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe